Հայաստանի
ՔՀԿ-ների
Հակակոռուպցիոն
Կոալիցիա

ՀՀ, ք.Երևան, Նալբանդյան 7, գրասենյակ 2
Հեռ. (374 10) 540199,
Հեռ./ Ֆաքս: (374 10) 580299
E-mail: info@armla.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻՆ

ԴԻՄՈՒՄ

ՀՀ ԱԺ-ի կողմից 13.09.2019թ.-ին երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունված «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը չստորագրելու մասին

Հարգելի պարոն Նախագահ,

Ազգային ժողովը 25.06.2019թ.-ին առաջին ընթերցմամբ ընդունեց Ազգային ժողովի նախագահ **Արարատ Միրզոյանի կողմից ներկայացված «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը**, որն արժանացավ մասնագիտական հանրության, այդ թվում նաև՝ Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի փաստարկված քննադատության: Առաջինից երկրորդ ընթերցումն ընկած ժամանակահատվածում նախագիծը ենթարկվել էր որոշակի փոփոխության և այդ տեսքով ներկայացվել էր երկրորդ ընթերցման: Գտնում ենք, որ երկրորդ ընթերցմամբ ընդունված «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը հակասում է **Հայաստանի Հանրապետության կողմից վավերացրած միջազգային պայմանագրերին, Հայաստանի Հանրապետության սահմանադրությանը, Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային հանձնառություններին, հեղինակավոր միջազգային կազմակերպությունների կողմից ընդունված բանաձևերին ու սկզբունքներին, Հայաստանի Հանրապետության օրենսդրական ակտերին:** Վերը նշվածի վերաբերյալ իրավական վերլուծությունն ու հիմնավորումները ներկայացվում են ստորև:

Ա. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳԻՐ

1. 25.06.2019 թվականին իր հայտարարությամբ Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիան (այսուհետ՝ Կոալիցիան) դատապարտեց «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով (Պ-133[5]-08.05.2019-ՊԻ-011/0) առաջարկվող իրավակարգավորումները, որը շրջանառության մեջ էր դրվել ՀՀ ազգային ժողովի նախագահ Արարատ Միրզոյանի կողմից: Դրանք վերաբերվում էին Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կազմավորման կարգի փոփոխություններին: Նման կարևորության փաստաթուղթը չի ներկայացվել հանրային քննարկման՝ նույնիսկ ոլորտի հիմնական դերակատարների մասնակցությամբ:[1]

Նախագծով փոփոխվում են Հանձնաժողովի անդամի և նախագահի պաշտոնում թեկնածուների առաջադրման մեխանիզմները, որոնք խիստ քաղաքականացված են. նախ, դուրս է եկել անկախ մասնագիտացված խորհրդի կողմից մրցույթի անցկացման կարգը, որն ապահովում էր նաև քաղաքացիական հասարակության մասնակցությունը նշյալ գործընթացներին: Այնուհետև, առաջարկվող իրավակարգավորմամբ Հանձնաժողովի անդամի թեկնածուներից 5-ից 3-ին առաջադրում էր իշխող քաղաքական ուժը՝ 1-ը Կառավարության կողմից և 2-ը՝ ԱԺ կառավարող խմբակցության կողմից: Ավելին, եթե ԱԺ ընդդիմադիր խմբակցությունները չկարողանան համախոհությամբ ներկայացնել թեկնածու, այդ անդամին ևս առաջադրում էր իշխող ուժը՝ ի դեմս ԱԺ կառավարող խմբակցության: Հայտարարությամբ Կոալիցիան հորդորեց **ՀՀ Ազգային Ժողովի նախագահին հրատապ կարգով նախաձեռնել խորհրդարանական լսումներ՝ նոր ստեղծվող հակակոռուպցիոն ինստիտուցոնալ մարմնի մասին օրենսդրական նախագիծը ոլորտի բոլոր դերակատարների մասնակցությամբ քննարկելու համար**:[2]

2. 03.07.2019 թվականին իր հայտարարությամբ Կոալիցիայի կառավարման խորհուրդը անընդունելի է համարել այն, որ Ազգային ժողովը, հաշվի չառնելով Կոալիցիայի կողմից «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ 25.06.2019թ.-ին արտահայտված մտահոգությունները, **նույն օրն առաջին ընթերցմամբ ընդունեց օրենքի նախագիծը:** Կոալիցիայի կառավարման խորհուրդը մեկ անգամ ևս վերահաստատեց իր

---

[1] 25.06.2019թ.-ին առաջին ընթերցմամբ ընդունված «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը հասանելի է հետևյալ հղմամբ. http://parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=10588&Reading=1

[2] Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի 25.06.2019 թվականի հայտարարության հասանելի է հետևյալ հղմամբ. https://armla.am/43693.html

դիրքորոշումն առ այն, որ նախագծով նախատեսված իրավակարգավորումները **Հանձնաժողովի անդամների ընտրության գործընթացը դարձնում են քաղաքականացված, ոչ անաչառ, ոչ մասնագիտացված, ոչ թափանցիկ և խիստ վերահսկելի կառավարող քաղաքական ուժի կողմից:**

Այս կապակցությամբ Կոալիցիան համապատասխան գրություններ ներկայացրեց ԱԺ նախագահ Արարատ Միրզոյանին, ինչպես նաև ԱԺ բոլոր խմբակցությունների ղեկավարներին և յոթերորդ գումարման խորհրդարանական ընտրություններին մասնակցած մյուս քաղաքական ուժերի ղեկավարներին, միջազգային կառույցներին և հորդորեց հետ կանչել օրենքի նախագիծը՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ ՀՀ 2019-2022թթ. հակակոռուպցիոն ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը գտնվում են հանրային քննարկման փուլում, և դեռևս հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի մոդելի ընտրության հարցում Կառավարությունը վերջնական որոշում չի կայացրել:

Սույն առաջարկը չընդունելու դեպքում միայն, Կոալիցիան հորդորեց ԱԺ նախագահին՝ մինչև օրենքի նախագծի երկրորդ ընթերցումը՝ ներկայացնել դրա փորձաքննության արդյունքները, հիմնավորումը՝ օրենքով նախատեսված բոլոր բաղադրիչներով, հրատապ կարգով նախաձեռնել խորհրդարանական լսումներ Օրենքի նախագիծը ոլորտի բոլոր դերակատարների մասնակցությամբ քննարկելու նպատակով, ստեղծել ԱԺ-ՔՀԿ-Կառավարություն աշխատանքային խումբ՝ հակակոռուպցիոն մարմնի հայկական մոդելի ներդրմանն ուղղված իրավական ակտերի նախագծերի մշակման համար:[3]

3. 13.09.2019թ.-ին ՀՀ ԱԺ-ն երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունեց «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքը (Պ-133[5]-08.05.2019-ՊԻ-011/1):[4]

Բ. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԸ, ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՀՀ-ԻՆ ՏՐՎԱԾ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԸ

1. ՄԱԿ-Ի ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ԿՈՆՎԵՆՑԻԱ

I. Կոնվենցիայի վավերացման մասին ՄԴ որոշումը

---

[3] Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի 03.07.2019 թվականի հայտարարության հասանելի է հետևյալ հղմամբ. https://armla.am/44019.html

[4] 13.09.2019թ.-ին երկրորդ ընթերցմամբ ընդունված «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը հասանելի է հետևյալ հղմամբ. http://parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=10588&Reading=0

30.06.2006 թվականին ՀՀ սահմանադրական դատարանը կայացրել է «Հանուն ՀՀ սահմանադրական դատարանի որոշումը 2003 թվականի հոկտեմբերի 31-ին Նյու Յորքում ընդունված՝ Կոռուպցիայի դեմ կոնվենցիայում ամրագրված պարտավորությունների՝ ՀՀ սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով» ՍԴՈ-641 որոշումը:[5] Հիշյալ որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանը պարզել է, որ.

1. *(...)* Հայաստանի Հանրապետությունը Կոնվենցիան ստորագրել է 2005 թվականի հոկտեմբերի 19-ին:

2. Կոնվենցիայով Հայաստանի Հանրապետությունը, մասնավորապես, ստանձնում է հետևյալ հիմնական պարտավորությունները. *(...)*

- **ՀՀ իրավական համակարգի սկզբունքներին** համապատասխան մշակել և իրականացնել կամ **վարել հանրության մասնակցությանը** և օրենքի գերակայության սկզբունքների արտացոլմանը, պետական գործերի և պետական գույքի պատշաճ կառավարմանը, ազնվությանը և անկաշառությանը, **թափանցիկությանը** և պատասխանատվությանը նպաստող՝ կոռուպցիայի հակազդման արդյունավետ, համակարգված քաղաքականություն,

- պետական վարչակազմում **թափանցիկության** մեծացման համար **ձեռնարկել համապատասխան միջոցներ**, այդ թվում դրա կազմակերպման, գործունեության **և, համապատասխան դեպքերում, որոշումների կայացման գործընթացների առնչությամբ,**

- անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել պետական հատվածից դուրս առանձին անհատների և խմբերի, ինչպես, օրինակ, **քաղաքացիական հասարակության**, ոչ կառավարական կազմակերպությունների և համայնքների հիմքի վրա գործող կազմակերպությունների, **կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարի գործում ակտիվ մասնակցությանը նպաստելու համար** և հասարակության կողմից կոռուպցիայի առկայության փաստի, դրա պատճառների և վտանգավորության բնույթի, ինչպես նաև դրա կողմից ստեղծվող սպառնալիքների գիտակցումը մեծացնելու համար,

- **կազմել հանձնաժողով**, որը պատասխանատու կլինի, **կոնվենցիայի համաձայն,** իրավախախտումների համար պատժամիջոցների կիրառման համար՝ հաշվի առնելով դրանց վտանգավորության աստիճանը,

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2 կետով, 102 հոդվածի առաջին և չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5

---

[5] 30.06.2006 թ.-ի ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ-641 որոշումը հասանելի է հետևյալ հղմամբ. https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=25173

հոդվածի 2 կետով, 67 և 68 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը որոշեց.

1. 2003 թվականի հոկտեմբերի 31-ին Նյու Յորքում ընդունված՝ Կոռուպցիայի դեմ կոնվենցիայում ամրագրված **պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը**:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

II. ԱԺ վավերացումը

ՀՀ ազգային ժողովը 23.10.2006 թվականին ընդունեց, իսկ 25.11.2006 թվականին ստորագրեց Կոռուպցիայի դեմ կոնվենցիան վավերացնելու մասին որոշում:[6]

III. Կոնվենցիայի ուժի մեջը մտնելը

07.04.2007 թվականին ուժի մեջ է մտել ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիան:[7]

IV. ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի կարգավորումները

Հոդված 5. Կանխարգելիչ հակակոռուպցիոն քաղաքականությունը և պրակտիկան

1. Յուրաքանչյուր Մասնակից պետություն, իր իրավական համակարգի հիմնարար սկզբունքներին համապատասխան, պետք **է մշակի և իրականացնի կամ վարի հանրության մասնակցությանը** և օրենքի գերակայության սկզբունքների արտացոլմանը, պետական գործերի և պետական գույքի պատշաճ կառավարմանը, ազնվությանը և անկաշառությանը, թափանցիկությանը և պատասխանատվությանը նպաստող՝ **կոռուպցիայի հակազդման արդյունավետ, համակարգված քաղաքականություն**: ***(…)***

Հոդված 6. Կանխարգելիչ հակակոռուպցիոն մարմին կամ մարմիններ

1. Յուրաքանչյուր Մասնակից պետություն, իր իրավական համակարգի հիմնարար սկզբունքներին համապատասխան, պետք է ապահովի մարմնի կամ, անհրաժեշտության

---

[6] Կոռուպցիայի դեմ կոնվենցիան վավերացնելու մասին ՀՀ ԱԺ 23.10.2006թ.-ի որոշում հասանելի է հետևյալ հղմամբ. https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=28164

[7] ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիան հասանելի է հետևյալ հղմամբ. https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=48021

դեպքում, մարմինների առկայությունը, որոնք իրականացնում են կոռուպցիայի կանխարգելում այնպիսի միջոցների օգնությամբ, ինչպիսիք են.

ա) սույն Կոնվենցիայի 5-րդ հոդվածում նշված **քաղաքականության իրականացումը** և, համապատասխան դեպքերում, այդպիսի **քաղաքականություն իրականացման հսկողությունը և համակարգումը.**

(...) 2. Յուրաքանչյուր Մասնակից պետություն, իր իրավական համակարգի հիմնարար սկզբունքներին համապատասխան, սույն հոդվածի 1-ին կետում նշված մարմնին կամ մարմիններին պետք է **ապահովի անհրաժեշտ ինքնուրույնությամբ**, որպեսզի մարմինը կամ մարմինները կարողանան իրականացնել իրենց գործառույթներն արդյունավետ և **անհարկի ազդեցությունից ազատված**: Կտրամադրվեն անհրաժեշտ նյութական պաշարներ և մասնագիտացված անձնակազմ, ինչպես նաև անձնակազմի այնպիսի դասընթացներ, որոնք կարող են պահանջվել նրանց գործառույթների իրականացման համար: *(...)*

Հոդված 13. Հասարակության մասնակցությունը

1. Յուրաքանչյուր Մասնակից պետություն, իր հնարավորությունների սահմաններում և իր ներքին օրենսդրության հիմնարար սկզբունքներին համապատասխան, պետք է **անհրաժեշտ միջոցներ ձեռնարկի** պետական հատվածից դուրս առանձին անհատների և խմբերի, ինչպես, օրինակ, **քաղաքացիական հասարակության**, ոչ կառավարական կազմակերպությունների և համայնքների հիմքի վրա գործող կազմակերպությունների, **կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարի գործում ակտիվ մասնակցությանը նպաստելու համար** և հասարակության կողմից կոռուպցիայի առկայության փաստի, դրա պատճառների և վտանգավորության բնույթի, ինչպես նաև դրա կողմից ստեղծվող սպառնալիքների գիտակցումը մեծացնելու համար:

Այդ մասնակցությունը պետք է ամրապնդվի այնպիսի միջոցների օգնությամբ, ինչպիսիք են.

ա) թափանցիկության ուժեղացումը և որոշումների ընդունման գործընթացներում բնակչության ներգրավմանն աջակցելը.

բ) բնակչության համար տեղեկատվության նկատմամբ արդյունավետ մուտքը ապահովելը.

(...)

Հոդված 36. Մասնագիտացած մարմինները

Յուրաքանչյուր Մասնակից պետություն, իր իրավական համակարգի հիմնարար սկզբունքներին համապատասխան, պետք է ապահովի այնպիսի մարմնի կամ մարմինների կամ անձանց առկայությունը, որոնք մասնագիտացած են կոռուպցիայի դեմ պայքարում՝

իրավապահ միջոցների օգնությամբ: Մասնակից պետության իրավական համակարգի հիմնարար սկզբունքներին համապատասխան՝ այդպիսի մարմնին կամ մարմիններին կամ անձանց պետք է **անհրաժեշտ անկախություն ապահովվի**, որպեսզի նրանք կարողանան կատարել իրենց գործառույթները **առանց որևէ անհարկի ազդեցության**: Այդպիսի անձինք կամ այդպիսի մարմնի կամ մարմինների աշխատակիցները իրենց խնդիրների կատարման համար պետք է օժտված լինեն պատշաճ որակավորմամբ և պաշարներով:

2. ԵՎ «ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՆՎԵՆՑԻԱ

I. Կոնվենցիայի վավերացման մասին ՍԴ որոշումը

30.03.2004 թվականին ՀՀ սահմանադրական դատարանը կայացրել է «1999 թվականի հունվարի 27-ին Ստրասբուրգում ստորագրված՝ «Կոռուպցիայի մասին» քրեական իրավունքի կոնվենցիայում (կից հայտարարություններով) ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով» ՍԴՈ-483 որոշումը:[8] Հիշյալ որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանը պարզել է, որ.

1. «Կոռուպցիայի մասին» քրեական իրավունքի կոնվենցիան, որն ուժի մեջ է մտել 2002 թ. հուլիսի 1-ին, Հայաստանի Հանրապետության կողմից ստորագրվել է 2003 թ. մայիսի 15-ին: *(...)*

2. *(...)* Հայաստանի Հանրապետությունը կոնվենցիայով **<u>ստանձնում է</u>** նաև այնպիսի միջոցներ ձեռնարկելու **<u>պարտավորություն</u>**, որոնք անհրաժեշտ են կոռուպցիայի դեմ պայքարի **<u>մասնագիտացված մարմինների ստեղծման</u>**, արդարադատության հետ համագործակցող անձանց և վկաների պաշտպանությունն ապահովելու, ինչպես նաև կոնվենցիայով նախատեսված հանցագործությունների հավաքումը և այդ հանցագործություններից ստացված եկամուտների բռնագրավումը դյուրացնելու համար:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2 կետով, 102 հոդվածի առաջին և երրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5 հոդվածի 2 կետով, 67 և 68 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը որոշեց.

1. 1999 թ. հունվարի 27-ին Ստրասբուրգում ստորագրված՝ «Կոռուպցիայի մասին» քրեական իրավունքի կոնվենցիայում (կից հայտարարություններով) ամրագրված

---

[8] 30.03.2004թ.-ի ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ-483 որոշումը հասանելի է հետևյալ հղմամբ. https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=4801

պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է, վերանայման ենթակա չէ, ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

II. ԱԺ վավերացումը

ՀՀ ազգային ժողովը 08.06.2004 թվականին ընդունեց, իսկ 10.07.2004 թվականին ստորագրեց «Կոռուպցիայի մասին» քրեական իրավունքի կոնվենցիան վավերացնելու մասին որոշում:[9]

III. Կոնվենցիայի ուժի մեջը մտնելը

01.05.2006 թվականին ուժի մեջ է մտել ԵԽ-ի «Կոռուպցիայի մասին» քրեական իրավունքի կոնվենցիան:[10]

IV. «Կոռուպցիայի մասին» քրեական իրավունքի կոնվենցիայի կարգավորումը

Հոդված 20. Մասնագիտացած մարմիններ

Յուրաքանչյուր Կողմ պետք է **ընդունի այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ**, որոնք անհրաժեշտ են՝ ապահովելու համար, որ անձինք կամ կազմակերպությունները մասնագիտանան կաշառակերության դեմ պայքարում: Նրանք պետք է ունենան **անհրաժեշտ անկախություն,** այդ Կողմի իրավական համակարգի հիմնական սկզբունքներին համապատասխան, որպեսզի հնարավորություն ունենան իրենց գործունեությունն իրականացնել արդյունավետորեն և **առանց որևէ անհիմն ճնշման:** Կողմը պետք է ապահովի, որ նման կազմակերպությունների աշխատակազմերը իրենց գործունեության համար ունենան բավարար պատրաստվածություն և ֆինանսական միջոցներ:

3. ԵԽ-Ի ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ 20 ՂԵԿԱՎԱՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

---

[9] «Կոռուպցիայի մասին» քրեական իրավունքի կոնվենցիան վավերացնելու մասին ՀՀ ԱԺ 08.06.2004թ-ի որոշումը հասանելի է այստեղ. https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=4202

[10] ԵԽ-ի «Կոռուպցիայի մասին» քրեական իրավունքի կոնվենցիան հասանելի է հետևյալ հղմամբ. https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=29959

06.11.1997թ.-ին ԵԽ նախարարների կոմիտեն ընդունել է Կոռուպցիայի դեմ պայքարի 20 հիմնական սկզբունքների մասին թիվ (97) 24 բանաձևը:[11] Հիմնական սկզբունքներից է՝ **անկախությունը, ինքնավարությունը, անպատշաճ ազդեցությունից զերծ լինելը**: Այսպես, ըստ 3-րդ սկզբունքի անհրաժեշտ է ապահովել, որպեսզի կոռուպցիայի կանխարգելման, հետաքննության և դատական որոշման կայացման համար պատասխանատու անձինք իրենց գործառույթներին համապատասխան ունենան **անկախություն** և **ինքնավարություն**, **զերծ լինեն անպատշաճ ազդեցությունից,** ունենան անհրաժեշտ ապացույցներ հավաքելու արդյունավետ միջոցներ, տրամադրել անվտանգության երաշխիքներ այն անձանց, ովքեր աջակցում են իշխանություններին կոռուպցիայի դեմ պայքարում՝ ապահովելով քննության գաղտնիությունը:

4. ԵԽ ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻՆ ԿԻՑ ԹԻՎ 173 ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

27.01.1999թ.-ին ընդունվել է ԵԽ քրեական իրավունքի մասին կոնվենցիային կից թիվ 173-րոդ բացատրական զեկույցը, որում անդրադարձ է կատարվում նաև Կոնվենցիայի 20-րդ հոդվածով սահմանված մասնագիտացված մարմիններին:[12] Ըստ այդ.

«95. Այս հոդվածը մասնակից պետություններից պահանջում է ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու կոռուպցիայի դեմ պայքար իրականացնող ֆիզիկական անձանց և մարմինների մասնագիտական պատրաստվածությունը: Այս դրույթը հիմնված է կոռուպցիայի դեմ պայքար իրականացնող ֆիզիկական անձանց և մարմինների **մասնագիտացումն ու անկախությունը ապահովելու կարիքից,** որը թվարկված է ԵԽ մի շարք փաստաթղթերում»:

Բացատրական զեկույցի 98-րդ կետը ուղղակի հղում է կատարում Կոռուպցիայի դեմ պայքարի 20 հիմնական սկզբունքներից 3-րդին, որով ևս մեկ անգամ կարևորվում է՝ **անկախությունը, ինքնավարությունը, անպատշաճ ազդեցությունից զերծ լինելը**:

5. ԶԱԿԱՐՏԱՅԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

2012 թվականի նոյեմբերի 26-27-ին աշխարհի բազմաթիվ հակակոռուպցիոն գործակալությունների նախկին և ներկայիս ղեկավարները, հակակոռուպցիոն գործունեությամբ

---

[11] 06.11.1997թ.-ի ԵԽ նախարարների կոմիտեի Կոռուպցիայի դեմ պայքարի 20 հիմնական սկզբունքների մասին թիվ (97) 24 բանաձևը (մասնավորապես՝ սկզբունք 3) հասանելի է հետևյալ հղմամբ. https://rm.coe.int/16806cc17c

[12] 27.01.1999թ.-ի ԵԽ քրեական իրավունքի մասին կոնվենցիային կից թիվ 173-րդ բացատրական զեկույցը հասանելի է հետևյալ հղմամբ. https://rm.coe.int/16800cce441999

զբաղվողները և մասնագետները հավաքվեցին Ջակարտայում՝ քննարկելու **«Հակակոռուպցիոն գործակալությունների գործունեության սկզբունքների» համակցությունը հակակոռուպցիոն գործակալությունների (մարմինների) անկախությունը և արդյունավետությունը ամրապնդելու նպատակով**: Արդյունքում, ընդունվեց հակակոռուպցիոն գործակալությունների գործունեության սկզբունքների մասին Ջակարտայի հայտարարությունը (Ջակարտայի սկզբունքներ), որոնց համաձայն՝ հակակոռուպցիոն գործակալությունների անկախությունն ու արդյունավետությունն ապահովելու համար՝ **նման մարմնի ղեկավարները նշանակվում են մի գործընթացի միջոցով, որն ապահովում է նրա ապաքաղաքական դիրքորոշումը, անկողմնակալությունը, չեզոքությունը, բարեխղճությունն ու իրավասությունը**: Ջակարտայի կարևոր սկզբունքներից է նաև՝ **հանրային մասնակցությունը**, ըստ որի՝ հակակոռուպցիոն գործակալությունները պետք է կանոնավոր կերպով հաղորդակցվեն և ներգրավվեն հանրության մեջ, որպեսզի ապահովեն իրենց **անկախության, արդարացիության և արդյունավետության հանդեպ հանրային վստահությունը:**[13]

6. ՏՀԶԿ ՍՏԱՄԲՈՒԼՅԱՆ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՉՈՐՐՈՐԴ ՓՈՒԼԻ ԶԵԿՈՒՅՑ

2018 թվականի հոկտեմբերին Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների շրջանակներում հրապարակվել է Հայաստանի վերաբերյալ չորրորդ փուլի զեկույցը: [14] Զեկույցի 1-ին հանձնարարականում նշվում է.

«Ապահովել, որ հակակոռուպցիոն քաղաքականության փաստաթղթերը մշակվեն **շահագրգիռ կողմերի լայն ներգրավմամբ** և հիմնված լինեն կարիքների և ռիսկերի գնահատման»:

Զեկույցի 3-րդ հանձնարարականում նշվում է.

«1. «Սահմանել չափանիշներ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի պաշտոնում թեկնածուների ընտրության համար ձևավորված **Մրցութային խորհրդի անդամության համար:**

[13] 2012թ.-ի նոյեմբերի 26-27-ին հակակոռուպցիոն գործակալությունների գործունեության սկզբունքների մասին Ջակարտայի հայտարարության (Ջակարտայի սկզբունքներ) հայերեն տարբերակը հասանելի է հետևյալ հղմամբ. https://armla.am/wp-content/uploads/2019/01/Jakarta-statement-2012.pdf, անգլերեն տարբերակը՝ https://www.unodc.org/documents/corruption/WG-Prevention/Art_6_Preventive_anti-corruption_bodies/JAKARTA_STATEMENT_en.pdf

[14] https://www.oecd.org/corruption/acn/OECD-ACN-Armenia-4th-Round-Monitoring-Report-July-2018-ENG.pdf

2. Ապահովել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի **անդամների նշանակման թափանցիկությունն ու օբյեկտիվությունը, որը զերծ կլինի ցանկացած միջամտությունից, ներառյալ՝ քաղաքական, և որ գործընթացը կդիտվի որպես օբյեկտիվ հասարակության լայն շերտերի կողմից**»:

Վերը նշված միջազգային փաստաթղթերը սույն դիմումում կրկին անգամ չթվարկելու և փաստաթուղթը չծանրացնելու նպատակով, դրանք դիմումի հետագա շարադրանքում կներկայացվեն նաև՝ **«միջազգային փաստաթղթեր»** բառակապակցության տեսքով:

7. ՀՀ-ԵՄ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԵՎ ԸՆԴԼԱՅՆՎԱԾ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

I. Համաձայնագրի վավերացման մասին ՍԴ որոշումը

16.03.2018 թվականին ՀՀ սահմանադրական դատարանը կայացրել է «2017 թվականի նոյեմբերի 24-ին Բրյուսելում ստորագրված՝ ՀՀ-ի՝ մի կողմից, և Եվրոպական միության և ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների՝ մյուս կողմից, միջև համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ ՀՀ սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով» ՍԴՈ-1407 որոշումը:[15] Հիշյալ որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանը պարզել է, որ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը փոխադարձության սկզբունքով ստանձնում է մի շարք պարտավորություններ, մասնավորապես. *(…)*

- **պայքարել կոռուպցիայի,** անդրազգային կազմակերպված հանցավորության և ահաբեկչության տարբեր տեսակների դեմ, խթանել կայուն զարգացումը, արդյունավետ բազմակողմանիությունը և պայքարել զանգվածային ոչնչացման զենքերի տարածման և դրանց մատակարարման համակարգերի դեմ, այդ թվում՝ ԵՄ քիմիական, կենսաբանական, ճառագայթային և ատոմային ռիսկերի նվազեցման կենտրոնի Գերազանցության նախաձեռնության միջոցով (հոդված 2(4)), *(…)*

- **լիովին համագործակցել** իրավապահ, **կոռուպցիայի դեմ պայքարի** և արդարադատության իրականացման ոլորտների հաստատությունների **արդյունավետ գործունեության հարցում** (հոդված 12(2)), *(…)*

- ամրապնդել իրավապահ մարմինների միջև երկկողմ, տարածաշրջանային և միջազգային համագործակցությունը՝ ներառյալ Եվրոպական միության իրավապահ ոլորտում

[15] 16.03.2018թ.-ի ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ-1407 որոշումը հասանելի է հետևյալ հղմամբ. https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=120651

համագործակցության գործակալության (Եվրոպոլի) և Հայաստանի Հանրապետության համապատասխան մարմինների միջև համագործակցության հնարավոր զարգացումը: Արդյունավետորեն ներդնել համապատասխան միջազգային ստանդարտները, մասնավորապես այն ստանդարտները, որոնք ամրագրված են ՄԱԿ-ի 2000թ. Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ կոնվենցիայում և դրա երեք արձանագրություններում: **Համագործակցել կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարի հարցերով ՄԱԿ-ի 2003 թվականի Կոռուպցիայի դեմ կոնվենցիային, Եվրոպայի խորհրդի կոռուպցիայի դեմ պայքարի երկրների խմբի (ԳՐԵԿՕ) և ՏՀԶԿ-ի առաջարկություններին համապատասխան, գույքի հայտարարագրման ոլորտում թափանցիկության ապահովման,** խախտումների մասին տեղեկացնող անձանց պաշտպանության և իրավաբանական անձանց վերջնական շահառուների վերաբերյալ տեղեկությունների հրապարակման հարցերով (հոդված 16(2)), ***(…)***

- **ապահովել**, որպեսզի Հայաստանի Հանրապետության իշխանությունները Եվրոպական հանձնաժողովին անհապաղ փոխանցեն Եվրոպական միության ֆինանսական միջոցների իրականացման հետ կապված խարդախության, **կոռուպցիայի** կամ ցանկացած այլ չարաշահման, այդ թվում՝ շահերի բախման կասկածվող կամ փաստացի դեպքերի մասին իրենց հայտնի դարձած ցանկացած տեղեկություն. խարդախության և կոռուպցիայի կասկածի դեպքում պետք է տեղեկացվի նաև Խարդախության դեմ պայքարի եվրոպական գրասենյակը (հոդված 355(1)), ***(…)***

Սահմանադրական դատարանը նաև նշել է, որ չնայած վերոգրյալին, սահմանվում է, որ Եվրոպական միությունը և Հայաստանի Հանրապետությունը կարող են ժամանակավորապես կիրառել Համաձայնագիրն ամբողջությամբ կամ մասամբ՝ իրենց համապատասխան ներքին ընթացակարգերի համաձայն՝ ըստ կիրառելիության: Ժամանակավոր կիրառումն ուժի մեջ է մտնում ավանդապահի կողմից հետևյալն ստանալու օրվան հաջորդող երկրորդ ամսվա առաջին օրը՝ (a) Եվրոպական միության ծանուցումը՝ այդ նպատակի համար անհրաժեշտ ընթացակարգերի ավարտի մասին՝ Համաձայնագրի այն մասերի մատնանշմամբ, որոնք պետք է կիրառվեն ժամանակավորապես, և (b) Հայաստանի Հանրապետության՝ իր ներպետական ընթացակարգերի համաձայն ի պահ հանձնված վավերացման մասին փաստաթուղթը:

Հիշյալի կապակցությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ արտաքին գործերի նախարարության 2018 թվականի փետրվարի 6-ի տեղեկանքի համաձայն՝ Եվրոպական միությունը 2017 թվականի դեկտեմբերի 22-ին Համաձայնագրի 385-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն ծանուցել է հայկական կողմին, որ ավարտել է Համաձայնագրի ժամանակավոր կիրառման համար նախատեսված ընթացակարգերը: Ծանուցման մեջ նշված են Համաձայնագրի այն դրույթները, **որոնք Հայաստանի Հանրապետության կողմից**

Համաձայնագիրը վավերացվելուց հետո մինչև դրա ուժի մեջ մտնելը Եվրոպական միության և Հայաստանի միջև **կգործեն ժամանակավորապես**, այնքանով, որքանով դրանք վերաբերում են Եվրոպական միության իրավասությանը, այդ թվում՝ Եվրոպական միության ընդհանուր արտաքին և անվտանգության քաղաքականության մշակման և իրականացման իրավասությանը: **Ժամանակավոր կիրառվելիք դրույթներն են.** ա) I մասը, **բ) II մասի** 3, **4**, 7 և 8-րդ հոդվածները, գ) III մասի **12** և 15-րդ հոդվածները, ***(...)***

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը որոշեց.

1. 2017 թվականի նոյեմբերի 24-ին Բրյուսելում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության՝ մի կողմից, և Եվրոպական միության և ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների՝ մյուս կողմից, միջև Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրում **ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:**

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

II. ԱԺ վավերացումը

2018 թվականի ապրիլի 11-ին Ազգային ժողովը միաձայն քվեարկությամբ, վավերացրեց ՀՀ-ԵՄ համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը:[16]

III. ՀՀ-ԵՄ համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի կարգավորումը[17]

---

[16] «ՀՀ-ի՝ մի կողմից, և Եվրոպական միության և ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների՝ մյուս կողմից, միջև համապարփակ և ընդլայնված գործընկերության» համաձայնագիրը վավերացնելու մասին ՀՀ օրենքը հասանելի է հետևյալ հղմամբ. https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=121866

[17] ՀՀ-ԵՄ համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը հասանելի է հետևյալ հղմամբ. https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=124389

Հոդված 2. Ընդհանուր սկզբունքները

(...) 3. Կողմերը վերահաստատում են իրենց կողմից արդյունավետ կառավարման սկզբունքների, ինչպես նաև իրենց **միջազգային պարտավորությունների**, մասնավորապես՝ **ՄԱԿ-ի, Եվրոպայի խորհրդի** և ԵԱՀԿ շրջանակներում **ստանձնած պարտավորությունների** նկատմամբ **հարգանքը**:

Հոդված 4. Ներքին բարեփոխումները

Կողմերը **պետք է համագործակցեն** հետևյալ ոլորտներում՝ **կոռուպցիայի դեմ պայքարում արդյունավետության ապահովում,** մասնավորապես, **կոռուպցիայի դեմ պայքարում միջազգային համագործակցության ամրապնդման և համապատասխան միջազգային այնպիսի իրավական փաստաթղթերի արդյունավետ իրականացման նպատակով, ինչպես օրինակ՝ ՄԱԿ-ի 2003 թվականի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիան:**

Հոդված 12. Իրավունքի գերակայությունը և մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների հարգումը

(...) 2. Կողմերը **պետք է լիովին համագործակցեն** իրավապահ, **կոռուպցիայի դեմ պայքարի** և արդարադատության իրականացման ոլորտների հաստատությունների արդյունավետ գործունեության հարցում:

Հոդված 16. Կազմակերպված հանցավորության և կոռուպցիայի դեմ պայքարը

1. Կողմերը **պետք է համագործակցեն** քրեական և ապօրինի գործունեության, ներառյալ այնպիսի անդրազգային գործունեության՝ կազմակերպված կամ այլ ձևով, դեմ պայքարում և դրանց կանխարգելման գործում ինչպես օրինակ՝ *(...)* **ակտիվ և պասիվ կոռուպցիան՝ և՛ մասնավոր, և՛ պետական ոլորտներում,** *(...)*

2. Կողմերը **պետք է ամրապնդեն** իրավապահ մարմինների միջև երկկողմ, տարածաշրջանային և միջազգային համագործակցությունը՝ ներառյալ Եվրոպական միության իրավապահ ոլորտում համագործակցության գործակալության (Եվրոպոլի) և Հայաստանի Հանրապետության համապատասխան մարմինների միջև համագործակցության հնարավոր զարգացումը: Կողմերը պարտավորություն են ստանձնել արդյունավետորեն ներդնելու համապատասխան միջազգային ստանդարտները, մասնավորապես այն ստանդարտները, որոնք ամրագրված են ՄԱԿ-ի 2000 թվականի Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ կոնվենցիայում և դրա երեք արձանագրություններում: Կողմերը **պետք է համագործակցեն կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարի հարցերով ՄԱԿ-ի 2003 թվականի**

Կոռուպցիայի դեմ կոնվենցիային, Եվրոպայի խորհրդի կոռուպցիայի դեմ պայքարի երկրների խմբի (ԳՐԵԿՕ) և ՏՀԶԿ-ի առաջարկություններին համապատասխան, գույքի հայտարարագրման ոլորտում թափանցիկության ապահովման, խախտումների մասին տեղեկացնող անձանց պաշտպանության և իրավաբանական անձանց վերջնական շահառուների վերաբերյալ տեղեկությունների հրապարակման հարցերով:

Գ. «ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

2019 թվականի սեպտեմբերի 13-ին Ազգային ժողովը ընդունեց «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը (այսուհետ նաև՝ Օրենք)։ Կոալիցիան անընդունելի է համարում այն, որ Ազգային ժողովը, հաշվի չառնելով Կոալիցիայի կողմից Օրենքի նախագծի վերաբերյալ 25.06.2019թ.-ին և 03.07.2019թ.-ին արտահայտված մտահոգությունները, այդուհանդերձ ընդունել է այն։ Գտնում ենք, որ Օրենքը չի համապատասխանում վերը նշված ՀՀ միջազգային պայմանագրերին, հեղինակավոր միջազգային կառույցների կողմից ընդունված սկզբունքներին և բանաձևերին և նրանց կողմից Հայաստանին տրված հանձնարարականներին։ Այսպես.

ՄՇԱԿՈՒՄ. Ի սկզբանե, օրենքի նախագծի մշակման գործընթացը կարող ենք որակել խնդրահարույց, քանի որ **այն չի ներկայացվել հանրային քննարկման և չի հրապարակվել իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում՝ www.e-draft.am-ում:** Հիշյալը չի բխում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներից, որի համաձայն՝ **օրենսդրական ակտերը ենթակա են հանրային քննարկման** (բացառությամբ միջազգային պայմանագրի վավերացման կամ միանալու մասին օրենքի նախագծի):

Այս պարագայում կարող է օբյեկտիվորեն հարց առաջանալ, թե արդյո՞ք ԱԺ նախագահի կողմից ներկայացված օրենքի նախագիծը **պարտադիր հանրային քննարկման պետք է ներկայացվեր, թե՝ ոչ:** Ուստի, հարկ ենք համարում անդրադառնալ օրենքների նախագծերի հանրային քննարկումների անցկացնելու օրենսդրական առկա կարգավորումներին և դրան ներկայացվող պահանջներին՝ ընդհանրապես, **և ԱԺ պատգամավորների կամ խմբակցությունների կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացվող օրենքների**

նախագծերի հանրային քննարկում անցնելու պահանջներին՝ մասնավորապես: Նաև հիշեցնենք, որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով **հանրային քննարկումը** սահմանվել է որպես իրավաստեղծ գործընթացին **հասարակության մասնակցության**, գործընթացի **թափանցիկության և հաշվետվողականության** ապահովման նպատակով օրենքով սահմանված նորմատիվ իրավական ակտի **նախագծի վերաբերյալ հանրության իրազեկման, ինչպես նաև հանրային կարծիքը բացահայտելու**, **դրանց վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ ստանալու և դրանք ամփոփելու գործընթաց:**

Այսպես.

1. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների համաձայն՝ **օրենսդրական ակտերը** (ՀՀ ժողովրդի կամ Ազգային ժողովի ընդունած նորմատիվ իրավական ակտ՝ **Սահմանադրություն, սահմանադրական օրենքներ և օրենքներ**) ենթակա են հանրային քննարկման՝ բացառություն նախատեսելով միայն միջազգային պայմանագրի վավերացման կամ միանալու մասին օրենքի նախագծին:

2. Վերը նշված իրավական ակտի 4-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա ՀՀ կառավարությունը 2018 թվականի հոկտեմբերի 10-ին ընդունել է **«Հանրային քննարկումների կազմակերպման և անցկացման» կարգը,** որով պետական կառավարման համակարգի մարմինների կողմից մշակվող **ՀՀ կառավարության նորմատիվ որոշումների նախագծերի** պարտադիր հանրային քննարկման ենթարկելու ընթացակարգ է սահմանվել:

3. Նույն իրավական ակտի 1-ին հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ **Օրենքի 2-րդ գլուխը,** (վերաբերում է նորմատիվ իրավական ակտերի հանրային քննարկմանը) և **3-րդ գլուխը** (վերաբերում է նորմատիվ իրավական ակտի նախագծի կարգավորման ազդեցության գնահատմանն ու փորձաքննությանը) **չեն տարածվում Ազգային ժողովի պատգամավորների կամ խմբակցությունների կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացվող օրենքների կամ Ազգային ժողովի որոշումների նախագծերի վրա, ինչպես նաև քաղաքացիական նախաձեռնության կարգով առաջադրված օրենքի նախագծերի վրա:** Միևնույն ժամանակ, օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Ազգային ժողովի պատգամավորի կամ խմբակցության կողմից կամ քաղաքացիական նախաձեռնության կարգով առաջադրված և Ազգային ժողովի կողմից շրջանառված օրենքի նախագիծը Կառավարության կամ Վարչապետի հանձնարարությամբ **կարող է ենթարկվել կարգավորման ազդեցության գնահատման:**

Վերոնշյալ օրենսդրական կարգավորումները վկայում են, որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով և Կառավարության համապատասխան որոշմամբ օրենսդրական ակտերի նախագծերի հանրային քննարկման սահմանված ընթացակարգը **բացառապես վերաբերելի է Կառավարության օրենսդրական նախաձեռնություններին և որոշումներին:**

Ինչ վերաբերում է այն հարցին, թե արդյո՞ք ԱԺ պատգամավորների կամ խմբակցությունների կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացվող օրենքների կամ ԱԺ որոշումների նախագծերի հանրային քննարկման ընթացակարգ **այլ նորմատիվ իրավական ակտով կա սահմանված, թե՝ ոչ,** ապա պետք է նշենք, որ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով և 2016 թվականի դեկտեմբերի 16-ի ԱԺՈ-267-Ն որոշմամբ ընդունված Ազգային ժողովի աշխատակարգով վերոնշյալին վերաբերող **<u>որևէ ընթացակարգ չի սահմանվել:</u>** Խնդրո առարկայի վերաբերյալ հայտնում ենք, որ 2019 թվականի մայիսի 13-28-ը ՀՀ արդարադատության նախարարությունը իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական e-draft.am կայքում հանրային քննարկման էր ներկայացրել **«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը,**[18] որով առաջարկվող կարգավորման նպատակն է՝ հանրային քննարկման ընթացակարգ սահմանել նաև պատգամավորների կամ խմբակցությունների կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացվող օրենքների, ինչպես նաև քաղաքացիական նախաձեռնության կարգով առաջադրված օրենքի նախագծերի համար:

Այնուամենայնիվ, օրենսդրական բացը չպետք է պատճառ հանդիսանար ԱԺ նախագահի կողմից պատգամավորական նախաձեռնության կարգով ներկայացված օրենքի նախագծի հանրային քննարկում չկազմակերպելու համար, **շահագրգիռ անձանց տեսակետներն ու առաջարկությունները** հաշվի չառնելու համար, առավել ևս, օրենքի նախագիծը ԱԺ-ում **արտահերթ ռեժիմով** առաջին ընթերցմամբ ընդունելու համար:

Ավելին, պետք է նշենք, որ ԱԺ-ի պաշտոնական կայքէջում պետական–իրավական հարցերի մշտական հանձնաժողովի 12-րդ նիստի արձանագրության քաղվածքից[19] տեղեկանում ենք, որ հանձնաժողովի օրակարգում **ԱԺ նախագահի կողմից պատգամավորական նախաձեռնության կարգով ներկայացված Պ-133-08.05.2019 օրենքի նախագծերի փաթեթում «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ներառված չի եղել, այսինքն չի քննարկվել և ըստ էության, այն այլ օրենքների նախագծերի հետ այդ փաթեթում լրացվել է ավելի ուշ:** Նման

---

[18] «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը հասանելի է հետևյալ հղմամբ. https://www.e-draft.am/projects/1676/about

[19] ԱԺ պետական–իրավական հարցերի մշտական հանձնաժողովի 12-րդ նիստի արձանագրության քաղվածքը հասանելի է հետևյալ հղմամբ. http://www.parliament.am/committees.php?do=show&ID=111205&showdoc=2075&cat_id=registers&month=all&year=2019&lang=arm

գործելաոճը, ամենևին, չի բխում միջազգային փաստաթղթերի պահանջներից, նորմատիվ իրավական ակտերի ընդունման գործընթացի ժողովրդավարացման, հանրային մասնակցության ապահովման, առավել թափանցիկ կազմակերպման անհրաժեշտությունից:

Ընդգծենք, որ վերը նշված միջազգային փաստաթղթերով ուղղակիորեն խոսք է գնում հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և իրականացման գործընթացներում **հասարակության ներգրավման**, կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարի գործում **քաղաքացիական հասարակության, ոչ կառավարական կազմակերպությունների և համայնքների հիմքի վրա գործող կազմակերպությունների ակտիվ մասնակցության մասին:**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ. Օրենքով ընդունված կարևորագույն փոփոխությունը վերաբերում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) անդամների առաջադրման գործընթացին: Մասնավորապես, վերացվում է մրցութային խորհուրդը, իսկ Հանձնաժողովի 5 անդամներին առաջադրելու են իշխանության երեք թևերը: Այսպես, 1 անդամի առաջադրում է Կառավարությունը, 2-րդին՝ Ազգային ժողովի կառավարող խմբակցությունը, 3-րդին և 4-րդին՝ Ազգային ժողովի երկու ընդդիմադիր խմբակցությունները, իսկ 5-րդին՝ Բարձրագույն դատական խորհուրդը:

Վերը նշված բոլոր միջազգային փաստաթղթերում բացառիկության կարգով ընդգծվում է ներպետական մակարդակում այնպիսի մեխանիզմների ներդրման անհրաժեշտությունը, որը կերաշխավորի հակակոռուպցիոն մարմինների կառուցվածքային, գործառութային և ֆինանսական անկախությունը՝ զերծ որևէ տեսակի ազդեցությունից, այդ թվում նաև՝ քաղաքական: Հիշյալ միջազգային փաստաթղթերում, հատկապես կարևորվում են **«անհրաժեշտ անկախություն ապահովումն ու առանց որևէ ազդեցության»** երաշխիքների սահմանումը, քանի որ առանց նման երաշխիքների սահմանման հակակոռուպցիոն մարմինը չի կարող արդյունավետ գործել: Ընդ որում, անկախ այն հանգամանքից, թե հակակոռուպցիոն մարմինը իրականացնելու է կանխարգելի՞չ, թե՞ հետաքննչական գործառույթներ, անկախության տարբեր մակարդակի երաշխիքները պետք է սահմանվեն:

Քննարկման առարկա Հանձնաժողովի դեպքում, կոռուպցիայի դեմ պայքարում վերջինիս իրականացնելու է կրթական և կանխարգելիչ գործառույթներ, և այդ տեսանկյունից 2017 թվականի հունիսի 9-ին ընդունված «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՕ-96-Ն ՀՀ օրենքի 11-15-րդ հոդվածները՝ որպես Հանձնաժողովի անդամների ձևավորման գործընթացի **անկախության երաշխիք սահմանել էր մրցութային խորհրդի առկայություն**: Մրցութային խորհուրդը նաև ապահովելու էր Հանձնաժողովի անդամների ընտրության

գործընթացի ինքնիշխանությունը, **թափանցիկությունն և օբյեկտիվությունը, անդամների պրոֆեսիոնալիզմը:**

Հարկ է նշել, որ հիշյալ միջազգային փաստաթղթերով հատուկ տեղ է հատկացվում նաև կոռուպցիայի դեմ պայքարում **հասարակության լայն մասնակցությանը**: 2017 թվականին ընդունված Հանձնաժողովի մասին ՀՕ-96-Ն օրենքով սահմանված իրավակարգավորումները ապահովում էին հանրության մասնակցությունը և ունեին նաև հավասարակշռման և զսպիչների գործիքկազմ, երբ Հանձնաժողովի անդամների ընտրությունը արվելու էր պետական կառավարման համակարգի մարմինների և քաղաքացիական հասարակության ինստիտուտի ներկայացուցիչները՝ ի դեմս սահմանադրական մարմին հանդիսացող Հանրային խորհրդի և ՀՀ փաստաբանների պալատի:

Ի տարբերություն 2017 թվականին ընդունված ՀՕ-96-Ն օրենքի, 2019 թվականին սեպտեմբերի 13-ին ընդունված «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը, Հանձնաժողովի անդամների ընտրությունը կենտրոնացվել է բացառապես իշխանության երեք թևերի ձեռքում: Այսպես, ՀՀ կառավարությունը և ԱԺ կառավարող ուժը նշանակելու են Հանձնաժողովի 2 անդամների, մյուս 2 անդամներին նշանակելու են ԱԺ ընդդիմադիր խմբակցությունները: Ըստ «Լուսավոր Հայաստան» խմբակցության դիրքորոշման՝[20] Հանձնաժողովի անդամների առաջադրման գործընթացի վերաբերյալ կառավարող ուժի հետ ձեռք է բերվել քաղաքական կոնսենսուս: Մինչդեռ, մեր խորին համոզմամբ, սա ոչ թե **քաղաքական կոնսենսուս է**, այլ՝ **քաղաքական պայմանավորվածություն**, որի արդյունքում ընդդիմադիր խմբակցությունը կունենա «իր թեկնածուն» Հանձնաժողովում: Ընդ որում, հիշյալ եզրահանգումները վերաբերում են թեկնածու առաջադրելու իրավունք ունեցող բոլոր 5 սուբյեկտներին:

«Լուսավոր Հայաստան» խմբակցության վերոգրյալ դիրքորոշմամբ պայմանավորված, Կոալիցիան դիմել է «Լուսավոր Հայաստան» կուսակցությանը՝ Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի և «Լուսավոր Հայաստան» կուսակցության միջև 2016 թվականի հուլիսի 12-ին կնքված համագործակցության հուշագիրը միակողմանի դադարեցնելու վերաբերյալ, քանի որ այդ դիրքորոշումը հակասում է Հուշագրի հիմնական ուղղությանը. այն է՝ ջանքերի և ներուժի միատեղումը՝ ուղղված Հայաստանում քաղաքական և վարչական կոռուպցիայի նվազեցմանը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում արդյունավետ պետական կառավարման համակարգի զարգացմանը, թափանցիկության,

[20] Դիրքորոշմանը կարելի է ծանոթանալ հետևյալ հղմամբ.
https://www.shantnews.am/news/view/478615.html

հաշվետվողականության և բարեխղճության սկզբունքների տարածմանը ուղղված այնպիսի արդյունավետ հակակոռուպցիոն կառուցակարգերի ներդրմանը, ինչպիսին է՝ անկախ մասնագիտացված ունիվերսալ հակակոռուպցիոն մարմինը։

Շարունակելով, պետք է նշել, որ փաստացի, ստացվում է, որ քաղաքական պայմանավորվածության արդյունքում, երբ իշխանության երեք թևերի ներկայացուցիչները առաջադրելու են «իրենց թեկնածուին», խորհրդարանը՝ ձեռք բերված քաղաքական պայմանավորվածության արդյունքում, ընտրելու է առաջադրված թեկնածուներին։ Եվ այսպիսի պայմաններում, դժվար է պատկերացնել Հանձնաժողովի կոնկրետ անդամի օբյեկտիվ դիրքորոշումն ու անաչառ գործողությունները այն դեպքում, երբ Հանձնաժողովում քննարկվի իրեն նշանակած սուբյեկտի, մարմնի կամ քաղաքական ուժի հետ փոխկապակցված անձի վերաբերյալ հարուցված վարույթը։ Այսպիսով, ստացվում է, որ միջազգային չափանիշների տեսանկյունից՝ Հանձնաժողովի ձևավորման գործընթացում չի ապահովվելու թափանցիկության ընթացակարգեր, իսկ Հանձնաժողովը գտնվելու է իշխանության երեք թևերի ուղղակի ազդեցության տակ։ Ի լրումն, **<u>այս գործընթացում որևէ մասնակցություն չի ունենալու հասարակությունը</u>**։

Վերը նշվածը բավականաչափ հիմքեր են ստեղծում, ողջամիտ կասկածի տակ դնել Հանձնաժողովի անկախությունն ու ազդեցությունից զերծ լինելը, այդ թվում՝ քաղաքական։ Հիշյալը չի համապատասխանում վերը թվարկված ՀՀ միջազգային պայմանագրերին, հեղինակավոր միջազգային կառույցների կողմից ընդունված սկզբունքներին և բանաձևերին և նրանց կողմից Հայաստանի տրված հանձնարարականներին։

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ. Նախքան ընդունումը, Օրենքի նախագիծը չի ենթարկվել փորձաքննության, և բացակայում են փաստաթղթի ընդունման պարտադիր պայման հանդիսացող կից հիմնավորումները՝ իրենց բոլոր բաղադրիչներով հանդերձ։ Ի լրումն՝ ԱԺ նախագահ Արարատ Միրզոյանի և «Իմ քայլը» դաշինքի պատգամավոր Աննա Կարապետյանի կողմից հունիսի 25-ին Ազգային ժողովում Օրենքի նախագծով առաջարկվող փոփոխությունների անհրաժեշտությունը հիմնավորել են միջազգային կազմակերպությունների, մասնավորապես՝ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության կողմից տրված հանձնարարականներով։ Հարկ է նշել, որ ընդունված իրավակարգավորումները չեն բխում 2018 թվականի հոկտեմբերին Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների շրջանակներում Հայաստանի վերաբերյալ չորրորդ փուլի զեկույցում նախատեսված

հանձնարարականներից:[21] Ավելին, հիմնավորումները ուղղակիորեն հակասում են Զեկույցի հանձնարարականներին: Այսպես, 1-ին հանձնարարականում նշվում է.

«Ապահովել, որ հակակոռուպցիոն քաղաքականության փաստաթղթերը մշակվեն **շահագրգիռ կողմերի լայն ներգրավմամբ** և հիմնված լինեն կարիքների և ռիսկերի գնահատման»:

Զեկույցի 3-րդ հանձնարարականում նշվում է.

«1. «Սահմանել չափանիշներ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի պաշտոնում թեկնածուների ընտրության համար ձևավորված **Մրցութային խորհրդի անդամության համար:**

2. Ապահովել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի **անդամների նշանակման թափանցիկությունն ու օբյեկտիվությունը, որը զերծ կլինի ցանկացած միջամտությունից, ներառյալ՝ քաղաքական, և որ գործընթացը կդիտվի որպես օբյեկտիվ հասարակության լայն շերտերի կողմից**»:

Ակներև է, որ ՏՀԶԿ Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների շրջանակներում Հայաստանի վերաբերյալ չորրորդ փուլի զեկույցով տրված հանձնարարականներով միջազգային կազմակերպությունները ակնկալում են, որ **Հայաստանի իշխանությունները՝ շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ հանրության հետ համագործակցությամբ,** ձեռնամուխ կլինեն այնպիսի հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի ստեղծմանը, որի անդամների նշանակման գործընթացում կապահովվի **թափանցիկությունն ու օբյեկտիվությունը, այն զերծ կլինի ցանկացած միջամտությունից, ներառյալ՝ քաղաքական, և որ գործընթացը կդիտվի որպես օբյեկտիվ հասարակության լայն շերտերի կողմից:**

Այսպիսով, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը (Պ-133[5] -08.05.2019-ՊԻ-011) հակասում է **Հայաստանի Հանրապետության կողմից վավերացրած միջազգային պայմանագրերին, Հայաստանի Հանրապետության սահմանադրությանը, Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային հանձնառություններին, հեղինակավոր միջազգային կազմակերպությունների կողմից ընդունված բանաձևերին ու սկզբունքներին, Հայաստանի Հանրապետության օրենսդրական ակտերին:**

---

[21] Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների շրջանակներում Հայաստանի վերաբերյալ չորրորդ փուլի զեկույցը հասանելի է հետևյալ հղմամբ.https://www.oecd.org/corruption/acn/OECD-ACN-Armenia-4th-Round-Monitoring-Report-July-2018-ENG.pdf

Այսպես, ՀՀ սահմանադրության **5-րդ հոդվածում,** որը սահմանում է **իրավական նորմերի աստիճանակարգությունը,** ամրագրված է.

«1. Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ:

2. Օրենքները պետք է համապատասխանեն սահմանադրական օրենքներին, իսկ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը՝ սահմանադրական օրենքներին և օրենքներին:

3. Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի և օրենքների նորմերի միջև **հակասության** դեպքում **կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:**

«Միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի **2-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին մասի** համաձայն **միջազգային պայմանագիրը** դա Հայաստանի Հանրապետության և պայմանավորվող մյուս կողմի (կողմերի) միջև մեկ փաստաթղթի կամ փոխկապակցված և միմյանցից անբաժանելի մեկից ավելի փաստաթղթերի տեսքով գրավոր ձևակերպված և միջազգային հանրային իրավունքով կարգավորվող համաձայնություն՝ անկախ դրա անվանումից:

Նույն օրենքի **3-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝**

Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի և Հայաստանի Հանրապետության օրենքների նորմերի միջև **հակասության դեպքում կիրառվում են վավերացված միջազգային պայմանագրերի նորմերը:**

ՀՀ սահմանադրական դատարանը 19.11.2013 թվականի ՍԴՈ-1124 որոշմամբ,[22] անդրադառնալով ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ կոնվենցիայի և «Կոռուպցիայի մասին» քրեական իրավունքի կոնվենցիայի կիրառելիությանը Հայաստանում, նշել է. «առաջին՝ **Հայաստանի Հանրապետությունը 2004թ. դեկտեմբերի 8-ին վավերացրել է 1999թ. նոյեմբերի 4-ին Ստրասբուրգում ստորագրված՝ «Կոռուպցիայի մասին» քաղաքացիական իրավունքի կոնվենցիան, 2005թ. դեկտեմբերի 8-ին՝ 2003թ. մայիսի 15-ին Ստրասբուրգում ստորագրված՝ «Կոռուպցիայի մասին» քրեական իրավունքի կոնվենցիան, 2006թ. հոկտեմբերի 23-ին՝ 2003թ. հոկտեմբերի 31-ին Նյու Յորքում ընդունված՝ Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիան:**

Ընդ որում, **ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: Եթե**

---

[22] ՀՀ սահմանադրական դատարանի 19.11.2013 թվականի ՍԴՈ-1124 որոշումը հասանելի է հետևյալ հղմամբ. https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=86821

վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը:

Երկրորդ՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի համաձայն՝ վավերացման ենթակա միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետությունում նախնական պարտադիր սահմանադրական վերահսկողության օբյեկտ են: **Օրենքով սահմանված ընթացակարգի շրջանակներում Հանրապետության Նախագահը նախապես դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ հիշյալ կոնվենցիաներով ստանձնված պարտավորությունների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը քննության առնելու համար:**

Երրորդ՝ **ՀՀ սահմանադրական դատարանը համապատասխանաբար ընդունել է ՍԴՈ-530 /09.11.2004թ./, ՍԴՈ-483 /30.03.2004թ./ և ՍԴՈ-641 /30.06.2006թ./ որոշումները, որոնցով հիշյալ կոնվենցիաներով ստանձնված պարտավորությունները ճանաչել է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող:**

Ելնելով հարցի կարևորությունից, իրավական պետության կայացման հրամայականներից՝ ՀՀ սահմանադրական դատարանը ոչ միայն առաջարկվող իրավակարգավորումը համարել է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող, այլև 2004թ. մարտի 30-ի ՍԴՈ-483 որոշման մեջ շեշտել է, որ «Կոռուպցիայի մասին» քրեական իրավունքի կոնվենցիան կնպաստի ՀՀ Սահմանադրության առաջին հոդվածում հռչակված ժողովրդավարական և իրավական պետության ամրապնդմանը, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությանը»:

Այսպիսով, հիշյալ որոշմամբ Սահմանադրական դատարանը ևս մեկ անգամ վերահաստատել է այն իրողությունը, որ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի և օրենքների նորմերի միջև **հակասության** դեպքում **կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:**

Հիմք ընդունելով վերոգրյալը, առաջացել է անհրաժեշտություն քննարկելու «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի (Պ-133[5]-08.05.2019-ՊԻ-011) համապատասխանության հարցը ՀՀ սահմանադրությանը՝ այն ՀՀ-ի կողմից վավերացված միջազգային պայմանագրերին՝ ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ և ԵԽ-ի «Կոռուպցիայի մասին» քրեական իրավունքի կոնվենցիաներին, հակասելու սահմանադրական հիմքով:

Սահմանադրական դատական դիմելու հիմնավորումները

Այսպես, **ՀՀ սահմանադրության 129-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝** «1. Ազգային ժողովի ընդունած օրենքը Հանրապետության նախագահն ստորագրում և հրապարակում է **քսանմեկօրյա ժամկետում կամ նույն ժամկետում դիմում է Սահմանադրական դատարան՝ Սահմանադրությանն օրենքի համապատասխանությունը որոշելու հարցով»:**

ՀՀ սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «4) Հանրապետության նախագահը՝ Սահմանադրության **129-րդ հոդվածի 1-ին մասով**, 139-րդ հոդվածի 2-րդ մասով, 150-րդ հոդվածով, ինչպես նաև **168-րդ հոդվածի 1-ին** և 4-րդ կետերով սահմանված դեպքերում.»:

ՀՀ սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Սահմանադրական դատարանը Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով՝ 1) որոշում է օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության նախագահի հրամանագրերի և կարգադրությունների, Կառավարության և վարչապետի որոշումների, ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի համապատասխանությունը Սահմանադրությանը.»:

ՀՀ սահմանադրական դատարանի մասին» օրենքի 68-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի համաձայն՝ «1. Սույն հոդվածում նշված գործերով կարող է վիճարկվել Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված ինչպես **նորմատիվ**, այնպես էլ անհատական բնույթ ունեցող **իրավական ակտերի սահմանադրականությունը**, բացառությամբ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից դիմում ներկայացվելու դեպքերի:

4. Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի վավերացման վերաբերյալ օրենքների սահմանադրականությունը կարող է վիճարկվել միայն տվյալ օրենքի ընդունման համար **Սահմանադրությամբ նախատեսված պահանջների պահպանման տեսանկյունից»:**

Հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաև ղեկավարվելով այն փաստով, որ ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ և ԵՄ-ի «Կոռուպցիայի մասին» քրեական իրավունքի կոնվենցիաները ուղղված են ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածով հռչակված Հայաստանի՝ որպես ժողովրդավարական և իրավական պետության ամրապնդմանը, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությանը, սույնով դիմում ենք Հայաստանի Հանրապետության նախագահին և առաջարկում ենք.

1. **Չստորագրել ՀՀ ԱԺ-ի կողմից 13.09.2019թ.-ին երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունված «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը:**

2. **Դիմել ՀՀ սահմանադրական դատարան՝ ՀՀ ԱԺ-ի կողմից 13.09.2019թ.-ին երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունված «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու նպատակով:**

Հարգանքով՝

Կարեն Զաղոյան

Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի քարտուղարության համակարգող

«04» հոկտեմբերի, 2019թ.

Ծանոթություն.

ա/ Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիան ստեղծվել է 2014 թվականի նոյեմբերի 28-ին, որին անդամակցում են շուրջ 90 կառույցներ Երևանից և ՀՀ մարզերից: Կոալիցիայի հիմնական նպատակներն են՝ բարձրացնել ՔՀԿ-ների կողմից հակակոռուպցիոն բարեփոխումների նկատմամբ հանրային վերահսկողության արդյունավետությունը, նպաստել հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ մեխանիզմների ամրապնդմանը և զարգացմանը, աջակցել հասարակության հակակոռուպցիոն ընկալման և իրազեկության մակարդակի բարձրացմանը:

բ/ ՀՀ նախագահին ուղղված սույն դիմումը հաստատվել է Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի կառավարման խորհրդի կողմից 04.10.2019թ.-ին: